

338.1(47.925) ↗
5 - 84 1927

07 FEB 2010

ԱՐԱՄԱՅԻՍ ՅԵՐՁՆԿՅԱՆ

ՄԵՐ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՀԵՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻՑ



ՀՈԼԴՈՂՈՍԱՏ ՀՐԱՏԱԿՉՈՒԹՅՈՒՆ

338.1(47.929)

5 - 84

ՅԵՐԵՎԱՆ - 1927

ՀՈՂՔՈՂԿՈՄԱՏԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՄԲ

ԼՈԽԸ ԵՆ ՏԵՍԵԼ

«ԳՅՈՒՂԱՑՈՒ ԳՐԱԴԱՐԱՆ»-Ի

ՀԵՏԵՎՅԱԼ ԳՐԲԵՐԸ

1. Աւղեցույց անտառային աշխատավորի 50 կ.

3. 2. Փիրումիան յեզ Յ., Մելքոնյան. — Ինչու
ձեռնաու յե գործարանում լուղ և շվեյց.
պանիր պատրաստելը 3 »
4. 3. Փիրումիան. — Խոտարուխերը և նրանց
մշակության յեղանակները (սպառ.) 10 »
5. 4. Ա. Վ. Վալերիան. — Հ. Ս. Խ. Հ. Հողային
Որենագիրքը, բացատրական հարց ու պա-
տասխաններով. մասն առաջին, աշխատավո-
րական հողոգագործություն (սպառված) 40 »
6. 5. Հերիմյան. — Թթվանու մշակությունը 10 »
7. 6. Հերիմյան. — Շերամի վորդը, նրա կերա-
կրելն ու խնամքը 10 »
8. 7. Շերիցյան. — Կաթնատնտեսության գործ-
նական ձեռնարկ, մասն առաջին (64 նկ.) 1ռ. 50 »
9. 8. Մելիք-Շահնազարյան. — Ծխախոտի մշա-
կությունը 20 »
10. 9. Մերիկովին. — Տասը պատգամանասնապահին 20 »
11. 10. Շերիցյան. — Անհատական, թէ կոռու. կաթ-
նատնտեսություն 10 »
12. 11. Հարուբյուն. — Բատրանկ, կնքիր պայմա-
նագիր (չափածո) 5 »
13. 12. Մոռոմանյան. — Շարքացանքը և նրա նշա-
նակությունը 15 »
14. 13. Խ. Շեր-Շերսիսյան. — Ինչպիս մշակել լսա-
ղողի ալգիները (28 նկարով) 35 կ.
15. 14. Շերսիսյան գեղի գլուղ. — Անդրկովկաս-
յան Յերկրային կոմիտեի բանաձեռ գյու-
ղացիական հարցի մասին, նախարանով (սպառված) 14 »

ԱՐԱՄԱՅԻՆ ՅԵՐՉՆԿՅԱՆ

ՄԵՐ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՀԵՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻՑ

ՀՈՂՔՈՂԿՈՄԱՏԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՏԵՐԵՎ. Ա. 1927

2490

10 APR 2013

30.29.

ՅԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Ներկա գրքույկը արծարծում ե այն խնդիրները, վոր մի տարի առաջ քննության ե առնլ գյուղատնտեսական յերկրորդ համագումարը:

Ճիշտ ե, հարցերի մի մասը լուծված ե արդեն, բայց ընդհանուր առմամբ հիմնականները նրանցից դեռ ծառացած են մեր առաջ, ունեն այժմեյականություն յեվ նրանց լուծումը դարձել ե հրամայական պահանջ:

Այդ հարցերն ընթերցող լայն խավերի ուշադրությանը ներկայացնելու համար ե, վոր հրատարակության ե հանձնվում գրքույկս:

Խմբ. Կոլեգիա

13326

Գրառեպլար № 93բ.

Տիրաժ 1000.

Պետհրատի յերկրորդ տպարան Յերևանում—241

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՐՑԵՐ

Զափաղանց կարեոր և հիմնական խնդիրներով զբաղվեց պյուղատնտեսական համագումարը։ Մեր գյուղատնտեսության անելիքներն ու հեռանկարները շեշտվեցին իրենց ամբողջ ծավալով, մանրամասն քննության առնվեցին գյուղատնտեսական կուլտուրաների տարբեր ճյուղերը, նրանց զարգացման ուղիներըն ու միջոցները։

Հիմնական հարցը՝ մանրակրկիտ փորձնական ուսումնասիրության խնդիրն եր։ Մեր յերկիրը չի ուսումնասիրված։ Ցարական կառավարությունն այդ տեսակետից վոչ մի աշխատանք չի կատարել, դաշնակցականներն իրենց իշխանության որոք յերբեք չեն մտածել յերկրի տնտեսության զարգացման մասին, բնակենորեն չեն զրադիր յերկրի ուսումնասիրության խնդիրներով։

Հասկանալի չե, քանի վոր մեր առաջ զրված ե տնտեսության կազմակերպումը, նրա զարգացումն ու վերելքը, ապա նըրա ուսումնասիրության խնդիրը մեր առաջ պիտի ծառանա իրեկ մի հրամայական պահանջ։ Գյուղատնտեսության ասպարիզում օրոնց հիմնական ուսումնասիրության, առանց փորձնական-գիտական աշխատանքի հնարավոր չե տարբեր կուլտուրաների զարգացումը և նրանց ուսումնասիրության կազմակերպումը։

Մեր յերկրի հողալին և կլիմայական պայմանների ուսումնասիրությունը գյուղատնտեսական տարբեր կուլտուրաների ուսումնասիրության ու նրանց համապատասխան կիրառման և զարգացման անհրաժեշտ նախապայմանն ե։ Դրան զուգընթաց գյուղատնտեսության յուրաքանչյուր առանձնահատուկ ճյուղի մանրակրկիտ ուսումնասիրությունը միայն հնարավորություն կտա նրանց զարգացման ուղիները ճիշտ կերպով վորոշելու և

նշելու այն տիպերը, վորոնք կհամապատասխանեն մեր տեղական պայմաններին:

Համագումարն առանձնապես շեշտեց այդ կարևոր բացը և վորոշեց ուսումնասիրել այս տարվա ծրագիրը:

ա) Հողային պայմանների լախ ուսումնասիրություն, վորը կատարվելու յի Պետալանի ղեկավարությամբ, պրոֆեսորներ Զախարովի և Հողժողկոմատի մասնագիտական ուժերի միջոցով:

բ) Անասնապահության ուսումնասիրություն. այս աշխատանքը տարբելու յի պրոֆ. Լիսկունի ղեկավարությամբ:

գ) Այս տարի ինքնուրուց կերպով պիտի ուսումնասիրվե ձիաբուծությունը՝ հատուկ մասնագետների միջոցով:

դ) Այգիների մասսայական ուսումնասիրություն՝ վորոշելու համար վնասատուների տեսակներն, առանձնապես պարզելու համար, թե՝ գոյություն ունի՞ մեղանում փիլոքսերա, թե՝ վոչ:

Այս մի չափազանց կարևոր խնդիր ե, վորովհետեւ յեթե ձեռք չառնվեն համապատասխան միջոցներ, ապա ֆիլոքսերան մուտք գործելով հայաստան կարող ե մեր արգեգործությունը կործանել: Առաջադրված այս հարցերն այս տարվա ընթացքում ուսումնասիրվելիք ինքիրներ են, վորոնք պիտի կատարվեն մինչև աշուն, սակայն համագումարը կանգ առավ այն մնայուն հիմնարկների վրա, վորոնք գիտական-ուսումնասիրական նշակություն ունեն:

Առանձին ուշադրություն դարձվեց կենարոնական լաբորատորիայի ուսումնասիրական աշխատանքների, ապա փորձագաշտերի միջոցով կատարվելիք հետազոտությունների վրա: Այս տարի կազմակերպվելու յի յերկունիոցը փորձադաշտ—Լենինականում և Եջմիածնի գավառում—հացահատիկների և բամբակի ուսումնասիրության համար: Միաժամանակ հիմնվելու յի ալպյան կայան կուլտուրաներն ուսումնասիրելու համար և գիճեգործական կայան՝ գինեգործությունն ու արգեգործությունն ուսումնասիրելու համար:

Համագումարի այս ծրագրի կիրառումը հնարավորություն կտա մեզ՝ մեր ազգոնոմիական աշխատանքների ընթացքում խռասափելու սխալներից:

Համագումարը շղագից նաև գյուղատնտեսական շրջանացման խնդիրը: Նախ շրջանացման տեսակետներից Հայաստանի

տնտեսությունը չի կարելի վերցնել իրեն մի ինքնամփոփ տընտեսություն:

Մեր շրջանացումը պիտի սերտ կերպով կտպվի Անդրկովկասյան ֆեղերացիալի և համամիութենական շրջանացման հետ: Շրջանացման պրոցեսում նկատի պիտի առնել շուկաների և սպառման հարցը: Մեր յերկրի գյուղատնտեսական կուլտուրաների ապրանքայնությունը (товарность) չափազանց մեծ է, ուստի շուկաների ու սպառման խնդիրը հիմնական նշանակություն ունի այս կամ այն կուլտուրայի զարգացման տեսակետից: Ուստի շրջանացումը նկատի պիտի առնի ամենից առաջ համամիութենական շուկայի պահանջները և այն ել վոչ թե ժամանակավոր, այլ տեսական պահանջները: Մյուս կողմից նկատի պիտի առնել մեր յերկրի արդյունաբերության զարգացման պահանջներն ու հեռանկարները:

Մեր յերկիրն առայժմ գյուղատնտեսական յերկիր ե, սակայն սակավահող: Անող ազգաբնակության տնտեսական կարիքները պիտի բավարարվեն մի կողմից գյուղատնտեսության ինտենսիվիկացիայով, իսկ վոր ամենակարենըն ե, յերկրի արդյունաբերության հետագա զարգացմար:

Համագումարը շեշտեց այն կարենությունը, վոր ունի կոռոպերացիան գյուղատնտեսության ասպարիզում: Մտածել գյուղատնտեսության ինտենսիվիկացիայի և մեքենացման մասին, առանց կոռպերացման, անհնար ե: Միմիայն կոռպերացման ուղիով հնարավոր և զարգացնել գյուղում տնտեսությունը: Մեր գյուղատնտեսական կոռպերացիան նոր ե, նոր ընդամենը մեկ և կես տարվա հասակ ունի, սակայն այդ կարճ ժամանակում գյուղատնտեսության կազմակերպության պրոցեսում նա իր պատվագոր տեղն է գրագել և գրգել և առողջ հիմքի վրա: Կոռպերացիան, ինարկե, հսկայական անելիքներ ունի: Նա ունի և վորութերություններ, վորոնք սակայն բղխում են որևէ կտիվ պայմաններից:

Հողժողկոմատի ամրող ազգանոմիական պերսոնալը պիտի սերտ կերպով շաղկապված լինի Հայզյուղկոոպի հետ:

* *

Համագումարն ավելի մանրամասնորեն կան առավ գյուղատնտեսական տարբեր կուլտուրաների ասպարիզում կատարված

աշխատանքների, նրանց ներկա վիճակի, հեռանկարների և այն ուղիի վրա, վորով նա պիտի ընթանա, և այն գործնական ու գիտական աշխատանքների վրա, վորոնք նպաստելու յին նրա վերելքին:

Առանձնահատուկ ուշադրություն դարձվեց անասնապահության ներկա վիճակի և նրա հետագա զարգացման վրա: Մանրամասն շոշափվեցին այն խնդիրները, վորոնք առնչություն ունեն անասնապահության զարգացման հետ և մշակվեցին այն գործնական միջոցները, վորոնք առաջիկայում պիտք և կիրառվեն: Անասնապահության զարգացման հիմնական խնդիրներն են համարվում: —

ա) **Արտօների հարցը.**—Մեր յերկիրը հարուստ և ալպյան արոտներով, սակայն արոտների հետ կապված են մի շարք հարցեր, վորոնք յեթե չլուծվեն, ապա մեր արոտները չեն կարող կատարել մեր տնտեսության նրանց վերապահած դերը:

Նախ՝ քոչվորների հարցը. պարզ ե, վոր քոչվորական տընտեսությունը հետամնաց, նոմագական ձեւ տնտեսություն յե. անհրաժեշտ է նրան վերջ տալ և անցնել նորմալ, նստակյաց անասնապահության: Մյուս կողմից, բնականաբար, պիտի աստիճանաբար վերջ տալ Ադրբեջանից մեր լեռները բարձրացող հսկա քոչվորությանը և արոտները հատկացնել տեղական սակավահող ու արոտապակաս ազգաբնակությանը:

Իհարկե, այս հարցը չի կարող լուծվել վարչական կարգով, գրչի մի հարգածով: Նա քիչ-շատ յերկարատես պրոցեսի խնդիր է, վորի լուծման ճանապարհը՝ Անդրկովկասի շրջանացումն ե:

Դաշտավայրի ազգաբնակության տնտեսական զարգացումը պիտի ընթանա տեղի հողային պայմաններին համապատասխան: Անդրկենտպորձկոմն այս ուղղությամբ համապատասխան վորոշում արդեն կայացրել ե և տարեցտարի կրծատվում են Ադրբեջանից յեկող քոչվորների տրամադրության տակ գտնվող արոտները և տրամադրվում են տեղական ազգաբնակության:

Թե՛ ցարական կառավարության և թե՛ դաշնակցականների որոք արոտները շահագործվել են անկանոն կերպով և նրանք հետզհետե քայլաբարում են, կորցնելով իրենց ունակությունը՝ ամբողջովին կամ մասամբ: Խորհրդային իշխանության որոք ևս այդ խնդիրը դեռ չի կարգավորված: Անհրաժեշտ է արոտների լայն ուսումնասիրություն կատարել և ապա մշակել ոգտագործ-

ման նորմաներ: Այս խնդրի լուծումը կարեոր և անտառների պահպանման տեսակետից: Մեր անտառների քայլայման պատճառներից մեկն ել—անտառներում գտնվող ձմերանոցներն են:

Մենք աստիճանաբար վերացնում ենք ձմերանոցները և սահմանափակում անտառներից ոգտվելու իրավունքը: Այս նըսպատակին հասնելու համար անհրաժեշտ է անասնապահության համար հատկացնել նոր վայրեր:

Խոշոր նշանակություն ունի դեպի արոտները տանող ճանապարհների և արոտներում գտնված ջրի խնդիրը, վորն անասնապահության զարգացման կարեոր ազդակներից մեկն ե: Համագումարը շեշտեց, վոր պիտի աստիճանաբար ստեղծել հանդի ճանապարհներ:

բ) **Ուացիոնալ կերի յեվ նրա պատրասման խնդիրները.**—Մեր գուղացին չի ըմբռնել ուացիոնալ կերակրման հսկայական դերը: Բազմաթիվ շրջաններում, բազմաթիվ զուղացիների մոտ կազմակերպվել ե ուացիոնալ կերակրում, վորը հսկայական հետեանքներ և տվել: Համագումարը շեշտեց, վոր այս աշխատանքը պիտի ավելի լայնացնել:

Մեր յերկրում կերի պակաս և զգացվում:

Նախ՝ անհրաժեշտ համարվեց կերի արտահանումն արգելել և յերկրորդ՝ կերի պատրաստման մասին հոգալ: Խոտացանությունը արդեն աստիճանաբար դառնում և մասսայական յերկույթ: Համագումարը կարեոր է համարում, վորպեսզի ազդրնոմիական կազմը լայն մասշտաբով կիրառի այս աշխատանքները տեղերում: Համագումարը մշակեց այն միջոցները, վորով պիտի յերկրի ներսում պատրաստել ընտիր և եժան խոտասերմեր՝ ազգաբնակությանը բաշխելու համար:

գ) **Անասունեների ազնվացման խնդիրը.**—Մեր յերկրի անասունների վորակն ընդհանուր առամբ չափազանց ցածր ե, ուստի նրանց ազնվացման խնդիրը Հողդողկոմատի հիմնական աշխատանքները մեկն ե յեղել: Ազնվացումը կատարվում է յերկու ուղղությամբ: Մեկը՝ տեղական ցեղերի ներքին ազնվացման ուղիով, մյուսը՝ յեվրոպական «սիմենտալ» և «շվից» տեսակների միջոցով: Համագումարը շեշտեց, վոր նախապատվություն պիտի տալ տեղական ընտիր ցեղերի ազնվացման, սակայն անուշագրության չպետք և մատնել և յեվրոպական ցեղերի պատվատումը: Այս նպատակի համար անհրաժեշտ է ավելի ևս ընդար-

ձակել բեղմնավորման կայտնների ցանցը և կաղմակերպել նոր անասնաբուժարաններ:

Համագումարը մատնանշեց այն դեֆեկտները, վոր դեռևս ունեն ՚իթիջանի և կոսու անասնաբուժարանները և նշեց այդ դեֆեկտները վերացնելու ճանապարհները: Ծրագրված ե կաղմակերպել անասնաբուժարաններ Նոր-Բայազետի, Զանգեզուրի և Լենինականի գավառներում:

Այնուհետև համագումարը վորոշեց մեր յերկրում ձիաբուժության ունենալիք բնույթը և նրա զարգացման ուղիները, բեղմնավորման կայտնների ցանցի խնդիրը և ձիյերի տեղական տիպի մշակման հարցը:

Շեշտելով, վոր մեր յերկրի մի շարք վայրեր միանգամայն հարմար են վոչխարաբուժության համար, համագումարը շեշտեց նաև վոչխարաբուժարանի կարեոր նշանակությունը և լավագույն ցեղերի ուսումնասիրության անհրաժեշտությունը բուժարանի միջոցով: Այդ նպատակով բերված էնվրոպական ցեղերը պետք ե դառնան լայն ուսումնասիրության նյութ մեր յերկրի կլիմայական և տեղագրական պայմանների տեսակետից: Պետք ե հատուկ ուշադրություն դարձնել նաև տեղական ցեղերի զարգացման վրա:

Համագումարը շեշտեց նաև, վոր խողաբուժության գործը արդեն դրված ե կանոնավոր հիմքերի վրա: Խողաբուժարանը այդ տեսակետից տվել ե խոշոր արդիունքներ: Յորկշիր ցեղի կենտրոնական խողաբուժարանն ունի արդեն իր ճյուղերը, վորտեղից տարածվում են խոզեր:

Համագումարը շեշտելով այս տարվանից կաղմակերպվող ալյանս կայանի կարեոր նշանակությունը, ընդգծեց, վոր անհրաժեշտ և նրան ավելի լայն հիմքերի վրա զնել:

*

**

Համագումարը պիտի լուրջ ուշադրություն դարձներ անասնապահության արտադրանքի—կաթնատնտեսության կանոնավոր կաղմակերպման հարցի վրա: Մեզանում կաթնատնտեսության կաղմակերպումը դրված ե նորմալ հունի մեջ: Կաթնատնտեսական արտադրանքներն իրենց սպառման համար արդեն ունեն շուկաներ: Մեր պատրաստած շվեյցարական պանիրը Խորհրդագին շուկայում առաջնակարգ տեղ ե ըստում: Համագումարն առանձնա-

հատուկ ուշադրություն դարձրեց կաթնամթերքների վորակի բարձրացման վրա: Հողմողկոմատը և Հալգուղկոոպը խոշոր ուշադրություն են դարձրել նրանց քանակի բարձրացման վրա, սակայն քիչ ուշադրություն նվիրել նրա վորակին: Անցյալ տարի կառուցված տասը և այս տարի կառուցվելիք հինգ նոր պահրագործարաններն ունեն նոր սարք, հարմարագույն պահեստներ և լարորատորիաներ: Ամենախոշորագույն խնդիրներից մեկը համարվեց վորակալ աշխատավորներ (արհեստավորներ) պատրաստելու գործը: Մենք շարունակ շատացնում ենք մեր գործարանները, կաղմակերպում ենք նորանոր արտելներ, հայ և թուրք գյուղացին, ուսու գյուղացու նման, կաղմակերպում ե արտելներ, անցնում ե օվելցարական և բութի պանրի արտադրության, սակայն վորակալ փորձված արհեստավորների բացակալությունը գերազանցորեն ազգում ե պանրի վորակի վրա: Այս բացը լրացնելու համար աշխատանքներն ընթանալու յեն յերկու ուղղությամբ: արդեն գոյություն ունեցող արհեստավորների համար Ստեփանավանում կաղմակերպվել են յեռամյա կուրսեր: Միաժամանակ այս տարվանից մեր կոսու անասնաբուժարանում, որինակելի գործարանին կից, բացվում ե մշտական պանրագործական դպրոց:

Մեր պանիրների հետագա պահպանման գործն ևս մեծ դեր է կատարում նրանց վորակի տեսակետից: Մեր բաղմաթիվ արտելները հնարավորություն չունեն հարմար, համապատասխան պահեստներ կառուցելու, ուստի անհրաժեշտ համարվեց մի շարք շվաններում կառուցել կենտրոնական պահեստներ, վորտեղ մեր արտելները հնարավորություն կունենան, մինչև շուկա հանելը, պահելու իրենց պանիրները:

Մեր ջիւ մորալ և մյուս պանիրները կատարելագործման և վորակի բարձրացման դեպքում, արտահանության ապրանք կարող են գանձնալ: Մեր պանրագործարաններին կից լաբորատորիաներն իրենց վրա պիտի վերցնեն այդ կարեոր փորձնական աշխատանքը:

Մեզավաբուժությունը, իբրև ոժանդակ տնտեսություն, ունի խոշոր նշանակություն: Մեր համարյա բոլոր գավառները, չնչին բացառությամբ նպաստավոր են մեղվարության զարգացման և ընտեր մեղք տալու տեսակետից: Մի քանի գավառ-

Ներում նա արդեն ստացել է մասսական բնույթ և գյուղացու բյուջեի մեջ վորոշ տեղ է ըռնում:

Այս ասպարիզում, նախ մի շարք գավառներում գործածությունից պիտի հանել քթոցները և անցնել նորաձեւ փեթակների:

Յերկրորդ գործը փոտախտի գեմ պայքարելն եւ Անողոք պայքար փոտախտի գեմ—ահա այն հիմնական հրահանգը, վոր համագումարի կողմից տրվեց գյուղատնտեսներին: Այս տարի կազմակերպվում են պետական յերկու որինակելի մեղվանոց և նրանց հարակից մեղվապահական կուրսեր՝ գյուղացիներից որինակելի մեղվապահներ պատրաստելու համար: Առանձին ուշադրություն դարձվեց մոմաթերթերի գործարանների վրա, վորոնք պիտի հատուկ կոնտրոլի յենթարկվեն Հողժողկոմատի կողմից, վորպեսզի նրանք իրենց վորակի և եժանության տեսակետից մատչելի լինեն մեղվապահներին, և վոր ամենագլխավորն եւ, նըրանց միջոցով փոտախտը չտարածվի:

Համագումարն ընդգծեց նաև, վոր անհրաժեշտ և արհետանոցների միջոցով, մասնավորապիս անտառից զուրկ արջանաներին, եժան գնով փեթակ մատակարարելու գործը կանոնավորել:

ՄԵՐ ԴԱՅԾԱՎԱՅՐԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Մեր գաշտավայրը յերկրի ապրանքային տնտեսության մեջ հսկայական նշանակություն ունի: Լինելով բարձր կուտուրաների մշակության վայր, նա վոչ միայն արտահանության համար տալիս է հումք նյութեր, այլ և հնարավորություններ և տալիս ստեղծելու և զարգացնելու յերկրի գործարանային կյանքը—արգյունաբերությունը: Մեր յերկրի սակավահողությունը ևս իր հերթին խթան է հանդիսանալու զարգացնել յերկրի գործարանային կյանքը:

Այս տեսակետից, ի հարկե, առաջին տեղը բռնում է բամբակագործությունը: Զնայած այն հանգամանքին, վոր դաշնակցական կառավարության ապիկար քաղաքականության շնորհիվ Հայաստանում բամբակի ցանքերն իսպառ վոչնչացել ելին, այնուամենայիվ Խորհրդային իշխանության ձեռք առած հիմնական միջոցները հնարավորություն տվեցին այդ կուլտուրայի մշակումը հասցնել նախապատերազմյան բարձրության: Գյուղատնտեսական համագումարն զբաղվեց բամբակագործության զարգացման հետագա հեռանկարներով և այն գործնական խնդիրներով, վորով մեր ազգուոմիտական կազմը տեղերում պիտի զեկավարվի ու գործի առաջիկա տարում: Ներկայումս բամբակի ցանքերի տարածությունը հաշվվում է 16,000 գետատին: Վորոնք են մեր հեռանկարներն այդ ասպարիզում: Յեթե մենք առանց վորեն խոչընդոտի (խոչընդոտները կարող են լինել միմիայն նյութական) հնարավորություն ունենանք իրավործել մեր ջրաշինարարական հնգամյա ծրագիրը, այն ե՞ կառուցանել մի շարք նոր առուներ—ջրանցքներ, ապա այդ տարածությունը կարելի յերեքից-չորս անգամ ավելացնել և հասցնել 50 հազարից մինչև 60 000 դես.: Սակայն, նկատի ունենալով մեր ջրային պայմանները, կարող կինենք այդ տարածությունն ավելացնել վոչ ա-

վելի, քան չորս հազար գետատինով։ Սակայն մեր ուշադրության ծանրության կենտրոնը պատի կազմի վոչ թե բամբակագործության լայնացումը, այլ նրա խորացումը։

Մեր բոլոր միջոցները պիտի ծառայեն մի հիմնական նպատակի—ավելի և լավացնել բամբակի վորակը և բարձրացնել մի դեմքատինի բերքի քանակը։ Փորձերը ցուց են տալիս, վոր այդ քանակը կարելի է յերկու-յերեք անգամ բարձրացնել։

Մեր բամբակագործն ընդհանուր առմամբ դեռ ծանոթ չե բամբակի մշակության կուլտուրական ձևերին։ Համագումարը մատնանշեց այն անելիքները, վորոնց միջոցով պետք ե ընդհանրանան մշակության լավագույն ձևերը։ Առաջինն որինակելի տնտեսություններ ստեղծելու հարցն ե։ Անցյալ տարի մեր ագրոնոմիական կազմի միջոցով բամբակագործական շրջաններում գլուղացիների տնտեսությունների մեջ կազմակերպված ելին մոտ յերեսուն որինակելի տնտեսություններ, վորտեղ մեր ագրոնոմիական կազմի հսկողության տակ և հողդողկոմատի նյութական ոժանդակությամբ գյուղացիությանը ծանոթացնում ելին մշակության կատարելագործված ձևերին։ Գյուղացիները մեծ հետաքրքրություն ելին ցուց տալիս գեպի այս աշխատանքները։ Նրանց տնտեսությունների մեջ շարքացանն աստիճանաբար արդեն ընդհանրացած յերկույթ ե գտնում։

Կարենը են նմանապես փորձագալտերում կատարվող աշխատանքները։ Համագումարը շեշտեց, վոր առանձին ուշադրություն պիտի դարձնել գյուղացու որինակելի տնտեսությունների վրա և նրանց ցանցն այս տարի ավելի և լայնացնել։

Հիմնական նշանակություն ունի նաև լավագույն սերմերի մատակարարումը։ Արդեն Արագայանում կազմակերպված ե խոշոր սերմնաբուծարան 500 դես., այս տարի յննթաղրվում ե նըրան կցել 200 դեստախին և։

Համագումարը շեշտեց նաև սելեկցիոն կայանի կազմակերպման անհրաժեշտությունը։ Այս տարվա ընթացքում անհրաժեշտ ե սելեկցիոն կայանի հիմք դնել։

Պարագանեան հարցը չափազանց ծանրակշիռ ե վոչ միայն բամբակագործության, այլ և մյուս կուլտուրաների զարգացման տեսակետից։ Անասունների աղբը, վորպես պարարտացման նյութ, շատ քիչ տեղ ե ոգտագործվում, շնորհիվ այն հանդամանքի, վոր մեր բազմաթիվ գավառները զուրկ են վառելանցու-

թից, և այդ աղբը գործ ե ածվում մեծ մասամբ վորպես վառելանկութ։ Ներկա պայմաններում գժվար ե հարկադրել գլուղացուն անասունների աղբը գործ ածել իրեկ պարարտացման նյութ։ Ներկայումս կանաչ պարարտացման մեթոդն ե, վոր տեղական ագրոնոմներն աշխատում են կիրառել և վորը ավել ե բավական զրագան հետեւանքներ։ Բամբակագործական շրջաններում իրեկ պարարտացման միջոց կիրառվում եր չալթուկի փոփոխական ցանքութ։ Աակայն մենք այժմ աշխատում ենք հիմնական մակարդակի մեջ կողմից՝ մալարիան վերացնելու, մյուս կողմից՝ ջրի անհրաժեշտ եկոնոմիական նպատակով։ Միաժամանակ անհրաժեշտ ե որ առաջ մտածել քիմիական պարարտացման մասին, թե գրաից ներմուծելով քիմիական պարարտացման եժան նյութեր և թե յերկրի ներսում պատրաստելով։

Հիմնական նշանակություն ունի նաև բամբակացաններին եժան հաց մատակարարելը։ Վորքան մեծ բանակությամբ և եժան հաց ներմուծվի բամբակագործական շրջանները, այնքան բամբակացանն իր ուշադրությունը կրկենի բամբակի ցանքերի վրա, այնքան նա կիրածարվի հացահատիկների ցանքերից։ Բամբակագործության զարգացման խթաններից մեկը պիտի հանդիսանա և բամբակագործների կոոպերացումը։ Դժբախտաբար Հայգուղկոսպը, շնորհիվ մի շարք որյեկտիվ պայմանների, շատ քիչ ուշադրություն ե դարձրել այդ խնդրի վրա։ Անհրաժեշտ ե, վոր Հայգուղկոսպն անցնի այս կարենը գործին։

Բամբակի գների հարցը նույնպես եցական նշանակություն ունի։ Այս հարցին պիտի մոտենալ չափազանց զգուշ, մի կողմից նկատի ունենալով արդյունաբերության շահերը, վորի պրոցեսցիական եժանացումը զյուղացու շահն ե պահանջում, մյուս կողմից՝ բամբակացանների շահերը, այն չափով, վորչափով բավարար գինը հնարավորություն կտա զարգացնելու բամբակագործությունը։ Բամբակը պիտի հացահատիկներից ավելի ոգտավետ լինի զյուղացու համար, այլապես նա կարող ե նորից անցնել հացահատիկների մշակությանը։

Համագումարում քննության առնվեց նաև այգիները կատարելագործված ձևերով մշակելու խնդիրը և վաղերի այն տեսակների տարածման հարցը, վորոնք լավագույն գինիներ կտան:

Անհրաժեշտ համարվեց փորձեր կատարել՝ ընտրելու վազի այնպիսի տեսակներ, վորոնք ավելի կդիմանան ցրտերի:

Հաղողի արժեքը և շուկաների ինդիքը նույնպես խոշոր նշանակություն ունի այգեգործության զարգացման տեսակետից: Շուկաների խնդիրը բավականաչափ դրական կերպով լուծված և «Արարտ» տրեստի և Հայուսողկոոպի կողմից, միութենական շուկան ևս սպառում է մեր գինին:

Այս տարվա խաղողի գներն արտօնակալ վիճակ ստեղծեցին զուղի ունենոր տարերի համար: Անհրաժեշտ և շուկայում գների այնպիսի քաղաքականություն վարել, վոր նպաստի այգեգործության զարգացմանը և լինի նպաստավոր՝ չքավոր և միջակ զուղացիության համար:

Համագումարն անհրաժեշտ համարեց այս տարի հիմնել գինեգործական-այգեգործական կայան՝ ուսումնասիրական նպատակով:

Մենք բազմաթիվ քարքարուտ ու ավազախառն վարեր ունենք, առանձնապես նախալեռնային ընջանում, վորոնք չափանց հարմար են այգեգործության համար: Անհրաժեշտ և ձեռք առնել մի շարք միջոցներ, վորպեսզի այդ հողերը դառնան պիտանի և ոգտակար, վորը հնարավոր և այգեգործության զարգացման միջոցով: Պետք է այդ հողամասերը տալ այն զուղացիներին, վորոնք կցանկանան այգի տնկեր, իրենց հողալին նորմաներից դուրս, և ապա մինչև տառներկու տարի ազատել վոր և է հարկից, միաժամանակ զուղատնտեսական բանկի միջոցով տալ յերկարատև վարկ:

Այս միջոցները հնարավորություն կտան այդ մինչև այժմ վոչ պիտանի հողերը մշակելու և ավելացնելու մեր այգիների տարածությունը: Համագումարն անհրաժեշտ գտավ, վորպեսզի այս տարվա ցրտերից վնասված այգեգործներին յերկարատև վարկ տրվի:

Պաղաբուծությունն ևս մեծ հեռանկարներ ունի. համարյա մեր բոլոր զավաներում հնարավոր և լայն չափով զարկ տալ պտղաբուծության զարգացմանը: Մեր լավագույն պտուղները կարող են մեծ չափով արտահանվել:



ԱՅԳԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ՊՏՂԱԲՈՒԹՈՒԹՅՈՒՆ

Մեր գաշտավայրի և նախալեռնային շրջանի հիմնական արդյունաբերական կուլտուրաներից և այգեգործությունը, վորը խոշոր տեղ և բռնում մեր յերկրի եկոնոմիկայի և առանձին շրջանների գյուղացու տնտեսության մեջ: Այգեգործությունն ու պտղաբուծությունը ունենա անտեսական խոշոր հեռանկարներ: Համաշխարհային պատերազմը և ազգամիջան կոիլիքն ահազին հարված եյին հասցրել մեր այգեգործությանը, առանձնապես վազի մշակության գործիքն ու վերին տարիներում, շնորհիվ ձեռք առնված մի շարք միջոցների, հնարավոր յեղավ այգեգործությունը դնել նորմալ հունի մեջ և այժմ նույնիսկ ազգաբնակությունը սկսել և նոր այգիներ տնկել:

Համագումարը ծանրացավ մի շարք խնդիրների վրա: Ամենից առաջ ֆիլոքսերայի հարց: Ֆիլոքսերան խոշոր ավերածությունների յի յենթարկել մեր հարեւն յերկրների այգեգործությունը և արդեն բաղխում և մեր դռները: Անհրաժեշտ են մի շարք նախապատրաստական և նախազգուշական միջոցներ: Ամենից առաջ պետք է ձեռք առնել կարուկ միջոցներ, վորպեսզի ֆիլոքսերայով բռնված շրջաններից մեր յերկրը վազեր և այլ շրջաններից բերվող տունկերի վերաբերմամբ կիրառել կարանտինային և ախտահանության խիստ միջոցներ: Կարենոր և նաև ամերիկյան վազերի տնկարանների կազմակերպման հարցը: մի քանի տնկարաններ արգեն ունենք, սակայն պետք է նորերը կազմակերպել: Միաժամանակ անհրաժեշտ է հատուկ տնկարաններում փորձեր կատարել պարզելու, թե ամերիկյան վնասակները պիտի տնկել յեթի ֆիլոքսերան տարածվի: Այս տարի պետք է ամբողջ Հայաստանում կատարել լայն հետազոտական ուսումնասիրություն, պարզելու համար, թե կա արդյոք մեր յերկրի վորեն մասում, թեկուղ քիչ չափով, ֆիլոքսերա:

Այս գործի զարգացումը պահանջում է ընտիր պատվաստած տունկեր տարածել ազգաբնակության մեջ: Մենք առաջմ ունենք մի անկարան, վոր հնարավորություն ունի մատակարարելու պատվաստած տունկեր, վոչ ավելի, քան հինգ հազար հատ, մինչդեռ պահանջը հարյուր հազարի յի հասնում: այդ Ղարաքիլսալի անկարան ե: Անհրաժեշտ է լայնացնել տնկարանների ցանցը: Միաժամանակ անհրաժեշտ և կաղմակերպել արտահանության գործը: Այս գործը պիտի տարփի իրեկու ուղղությամբ—թաց մրգերի արտահանության և պահածոների արտադրության: Թաց մրգերի արտահանության գործը լայն կերպով կազմակերպելու համար անհրաժեշտ և շատացնել իրութերմիկ վազոնների քանակը և կաղմակերպել սառցարանների գործը: Այս տարի խաղողն ու դեղձը Մոսկվա տեղափոխելու փորձը տվեց փայլուն հետևանք:

Մեր պահածոները Միության շուկայում իրենց վորակով առաջնակարգ տեղ են գրավել, անհրաժեշտ և հիմնել ավելի խոշոր գործարաններ:

4.

ՄԻԱԽՈՏԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ՇԵՐԱՄԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Յերկու հիմնական կուլտուրաներ, վորոնք չափազանց արժեքավոր են արտահանության տեսակետից, խոշոր թափ են ըստացել մեր գյուղացու տնտեսության մեջ: Դրանք են՝ ծխախոսագործությունն ու շերամապահությունը:

Ծխախոտագործությունը նոր և մուտք գործել Հայաստան և ունի խոշոր հեռանկարներ: Ամենից առաջ նրա խոշոր տնտեսական դերն այն է, վոր նաև մշակվում է նախալենային շրջանում, վորտեղ միայն հացահատիկներ են բուսնում:

Ծխախոտագործության զարգացումը խոշոր հեղաշրջում և առաջ բերելու այդ շրջանների գյուղացիության բյուջեյի մեջ: Մանավանդ, յեթե նկատի տոնենք, վոր մեղանում բուսնում և ամենաբարձր վորակի ծխախոտ:

Գյուղատնտեսական չերկրորդ համագումարն ընդգծեց, վոր այդ կուլտուրայի վրա անհրաժեշտ և առանձնահատուկ ուշադրություն դարձնել նրա զարգացման համար նպաստավոր պայմաններ: Ամենից առաջ պիտի շարունակել մեր ուսումնասիրական աշխատանքները զանազան վայրերի վերաբերմանը՝ բարձր տեսակի ծխախոտի մշակությունն այդ շրջաններում զարգացնելու համար: Վերջ պիտի տալ ցածր վորակի՝ «Ղուլասար» տեսակի ծխախոտի մշակության, վորը կարող և ազդել ընդհանրապես Հայաստանում մշակվող ծխախոտների վորակի վրա: Հատուկ ուշագրություն դարձնել զյուղերում կանոնավոր չորանոցներ կաղմակերպելու գործի վրա, վորովհետև չորանոցների բացակայությունը նախ հնարավորություն չի տալիս ծըխախոտագործությունը նորմալ հունի մեջ դնելու և գերազանցորեն ազդում ե նրա վորակի վրա: Ծխախոտագործության զարգացման հիմնական ազդակներից մեկն ել եժան վարկն ե: Ծխախոտագործությունն այնպիսի կուլտուրաներից ե, վոր պահանջում ե շոշափելի ծախքեր և նրա իրացումն ավելի չերկար ժամանակ և պահանջում: Գյուղացին հնարավորություն չունի

այդ ծախքերը հոգալու, ուստի վարկի պահանջը դառնում է հը-
րամայական: Միաժամանակ, վորակեսի տեղական ազգարնակու-
թյունը կարողանա ծանոթանալ ծխախոտի մշակության կատա-
րելագործված ձևերին, անհրաժեշտ է, վոր Հողմողկոմատը ար-
տասահմանից լեկած ծխախոտագործներին, մի քանի ընտանիք-
ներով, բնակեցնի այն տեղերում, վորակի ծխախոտագործությունն
ունի զարգացման հեռանկարներ, միաժամանակ տրամադրելով
ծխախոտի մշակման տեսակետից լավ հողեր և տալով դրու-
թյուններ:

Առանձին ուշագրություն պիտի զարձնել ծխախոտի հավա-
քելու և շուկա հանելու խնդիրների վրա:

Հայուղուղկոռը պարտավոր է այս խնդրի լուծումն իր վրա
վերցնել. անհրաժեշտ է, վորակեսի ծխախոտագործական կոռակե-
րացիան ընդլայնվի և ընդգրկի բոլոր ծխախոտագործներին:

Եերամապահությունն արգեն մկնել և զրավել նորանոր շըր-
ջաններ: Հայաստանի մի շարք զավառներ նպաստավոր վայրեր
են հանդիսանում շերամապահության զարգացման համար: Ար-
տասահմանից լեկած շերամապահները առանձնապես զարկ տվին
այդ գործի զարգացմանն ու տարածմանը: Եերամապահությունը
և նրա հետագա զարգացումը մեր առաջ զրել են միշտաք
խնդիրներ, վարությունը կարու են լուծման: Եերամապահության
զարգացումը սերտ կերպով կապված է թթենիների բազմացնելու
ու տարածելու հետ: Չունենալով մեր սեփական տնկարանները,
մենք անցյալ տարի գրանց ստացանք 200,000-ից ավելի տունի
և բաժանեցինք ազգաբնակությանը, սակայն այս մի չնչին
քանակություն է այն կարիքի հանդեպ, վոր մենք ունենք:

Այս կարիքը բավարարելու համար մենք արդեն հիմնել ենք
մի քանի տնկարաններ, սակայն նրանք բավարար չեն: Անհրա-
ժեշտ է այս տարի թե յեզած տնկարանները լայնացնել և թե նո-
րերը հիմնել: Մեր մշակած ծրագրով մեր տնկարանները պիտի 3
տարվա ընթացքում հասնեն այնպիսի արտադրության, վոր կա-
րողանան լուրաքանչյուր տարի ազգարնակությանը մատակար-
արել վոչ պակաս, քան' հինգ միլիոն թթենի: Առավելապես պի-
տի զարգացնել և տարածել թթենու տունկերի այն տեսակները,
վորոնք ազդում են շերամապահության ու բոժոժի վորակի
վրա:

Անհրաժեշտ է մի քանի գավառներում հիմնել կենտրոնա-

կան շերամապահական կայանի բաժանմուքներ՝ իրենց հրահանգ-
չական կազմով՝ ազգաբնակությանը ծանոթացնելու շերամապա-
հության յեղանակներին,

Եերամապահության զարգացման անհրաժեշտ պայմաններից
մեկն ել նրա վորակի բարձրացման խնդիրն է: Ամենից առաջ ան-
հրաժեշտ է շերամապահական վայրերում կազմակերպել կատա-
րելագործված կալաններ, վոր պակասում է մեզտնում, ապա խո-
շոր ուշագրություն դարձնել բոժոժի տեսակեավորման գործի վրա:
Վորը մեզանում գոյութիւնն չունի. մեր լավագույն բոժոժների
արժեքն ընկնում է տեսակավորման բացակայության պատճառով,

Մեր շերամապահական կայանն իր փորձնական աշխատանք-
ներով խոշոր գործ է կատարել տեսակների լավացման գործում,
և այդ աշխատանքները պիտի շարունակվեն նույն թափով և ծը-
րագրով:

Առողջ հիմքերի վրա յե գրված սերմարությունը: Մի
տարվա ընթացքում 5000 տուփից մենք բարձրացրինք մինչև
40,000 տուփի: Մեր շերամի սերմն իր վորակով չափազանց բար-
ձըր և թե առողջության տեսակետից և թե տված բոժոջի քանակի
տեսակետից, նա արդեն գրավում է շուկաներ. այս տարի մենք
ծրագրում ենք հասցնել 80,000 տուփից մինչև հարյուր հազարի,
սակայն այստեղ մեր առաջ ծառանում է շուկայի խնդիրը: Ա-
ռանձնահատուկ ուշագրություն պիտի դարձնել շուկայի խնդիրի
վրա և շերամապահ գյուղացիներին ծանոթացնել մեր շերամի սեր-
մի արժանիքներին: Գյուղացին այդ տեսակետից չափազանց կոն-
սերվատիվ և գժվարությամբ և մոտենում անսովոր սերմին:
Մեր յերկիրն առաջիկա տարիներում հազիվ կարողանա սպառել
մի տասնական հազար տուփ, ուստի ուշագրության կենտրոնը պի-
տի լինի Անդրկովկասի շուկան, ապա Անդրկասպյան յերկիրը և
Պարսկաստանը:

Այս հիմնական խնդիր է մեր սերմարության զարգացման
տեսակետից և այս նպատակին կարող ենք հասնել գների եժա-
նությամբ և կազմակերպչական հմտությամբ:

Հացահատիկների կուլտուրալի ասպարիզում մի շարք անե-
լիքներ կան. ամենից առաջ ընտիր սերմացուի մատակարարումը:
Անհրաժեշտ է մեր սերմարաշխների միջոցով պատրաստել ընտիր
սերմեր տարրեր շրջանների հողալին. և կլիմայական պայմաննե-
րին համապատասխան և ազգաբնակությանը ծանոթացնել այդ

ըստիր սերմի մշակուլթին. հարմարություններ ստեղծել սերմազտիչ կայանների միջոցով ցանելու մաքուր սերմեր և, վորամբնակարերն ե, ազգաբնակությանը ծանոթացնել մշակման կատարելագործված ձևերին։ Մեր ազրոնոմիկան կազմը զավառներում իր փորձադաշտերի, իր որինակելի ցանքերի ու տնտեսությունների միջոցով պիտի ընդհանրացնի դրված խնդիրները։

5.

ԳՅՈՒՂԱՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՔԵՆԱՑԱՑՄԱՆ ԳՈՐԾԸ

Գյուղատնտեսության զարգացման հիմնական ինդիքներից մեկն ե՝ մեքենացման հարց։ Մեր գյուղացիությունը մեծ մասամբ դեռ չի ազատազրվել իր չութից ու նահապետական գործիքներից։

Հայաստանի գյուղացին դեռ իր տնտեսությունը վարում է այնպիսի գործիքներով, վարպիսին գյուղացուն ուներ Քսենոփոնի որոք. պարզ ե, վոր նման գործիքներով գյուղատնտեսությունը իր զարգացման պրացեսում շատ հեռուն չի կարող զնալ։ Յեթև որա վրա ավելացնենք լծկանների պակասը, վոր գյուղացուն ունի մեծ չափերով, ավա պարզ ե, թե ինչպիսի անհրաժեշտություն ե ներկայացնում կատարելագործված գործիքների մուտքը մեր գյուղատնտեսության մեջ և նրա գերը գյուղացու բյուջեի բարձրացման խնդրում։

Հայաստանի գյուղատնտեսական համագումարն առանձնահատուկ ուշադրություն դարձրեց այս խնդրի վրա. քննության առնվեցին այն ձեռնարկումները, վորոնք նպաստում են գյուղի մեքենացման և վորոշեց այն ուղիները, վորոնցով անհրաժեշտ արագացնել մեքենացման գործը։

Այս գործին նպաստող գործադրված սիջոցների առաջնակարգ շարքին են պատկանում մեքենաների վարձակայանների ցանցը։ Համագումարը շեշտելով նրա գերը և ոգտակարութեած շեշտեց մի քանի թերություններ, վորն անհրաժեշտ է առաջիկայում լրացնել։ Անհրաժեշտ ե մեծ ուշագրություն դարձնել այդ ցանցի լայնացման գործի վրա և լիրկրորդ՝ բոլոր կայանները լրացնել պահանջվող ամեն տեսակի գործիքներով թե՛ քանակի և թե՛ վորակի տեսակետից։

Այնուհետև կարեօր նշանակություն ունի յերկրագործական գործիքների ներմուծման հարցը։ Այդ գործն սկզբներում կատարում եր Հողգողկոճատը, ապա իր վրա վերցրեց գյուղատն-

տեսական բանկը և մասամբ Հայոցուղիուպն ու ՀԱԿ-ը: Ներկայումս Անդրկովկասան մասշտաբով կազմված և հատուկ պետական հիմնարկություն «Յակըլմաշ» («Արդգյուղգործիք»)՝ խոշոր գրամագլխով, վորին Հայաստանի հիմնարկություններից մասնակցում են Հողժողկումատը, Գյուղբանկն ու Հայոցուղկուպը, և վորի նողատակն և մատակարարել գյուղական ազգաբնակությանը՝ եժան և լավագույն կատարելագործված մեքենաներ: «Յակըլմաշ»-ը արդեն բացել և Հայաստանում իր բաժանմունքը և իր վրա ին վերցրել մեքենաների մատակարարման գործը: Այսպիսով, յերկրագործական գործիքների մատակարարումն այսուհետև ստանում և ավելի պլանումեր բնոււթի:

Սակայն մի հանգամանքի վրա համագումարն առանձնահատուկ ուշադրություն դարձրեց: Այդ մեքենաների վորակի և մեր պայմաններին համապատասխան լինելու հարցն եւ: Մեր յերկրի ըելեփոր չափազանց բազմազան և, նրա հողալին պայմանները զանազան շրջաններում տարրեր են, ուստի լուրաքանչյուր շրջան պահանջում և իրեն համապատասխան գործիքներ, և նրանց ընտրությունը տարրեր վայրերի համար պիտի լինի չափազանց զգույշ: Անհրաժեշտ ե, վոր գավառական և շրջանակն աղբօնոմիական կազմը տեղում փորձեր կատարի պարզելու համար յուրաքանչյուր շրջանին համապատասխան գործիքների տիպը: այս փորձերը պիտի լինեն յերկարատև ու բազմակողմանի, վորպեսզի հնարավոր լինի լուրաքանչյուր շրջանին մատակարարել այն, ինչ վոր իրեն պիտանի չե և կտա մաքսիմալ արդյունք:

Կարեւոր խնդիրներից մեկը մեքենայացման ասպարիզում, այդ՝ տրակտորիզացիայի հարցն եւ: Այս հարցի դրական լուծումը խոշոր նշանակություն ունի գյուղատնտեսության զարգացման գործում: Մեր գաշտավայրի ազգաբնակությունը մասամբ զուրկ և լծկաններից և գյուղատնտեսական ինվենտարից, տրակտորի մուծումն այդ շրջանները դարձել և հրամայողական: Գյուղը զրի և այդ ուղղությամբ իր պահանջները, նա պահանջում է տրակտոր, նա լայն հավատով և մոտենում տրակտորին և պիտի բավարարել այդ պահանջը, սակայն անհրաժեշտ է ծայրահեղ զգուշափորություն և մտածված գործելակերպ:

Եախքան տրակտորներ մուծելն այս կամ այն գավառը, շըրջանը կամ գյուղը, անհրաժեշտ է կատարել մի շարք նախապատրաստական աշխատանքներ: Նախ այն շրջաններում, ուր տրակ-

տորները մուտք են գործել, պիտի ունենալ վառելիքի պահեստներ, վորպեսզի գյուղացին ստիպված չլինի վառելիքի պատճառվ որերով գագարեցնել տրակտորների աշխատանքը և այդպիսով մատնել գյուղացիությանը զործագրկության: Այդ պահեստներում պիտի ունենալ նաև տրակտորների պահեստի մասեր, այս պահեստներ կազմակերպելը պիտի ծանրանա Հայոցուղկոսպի վրա: Պիտի պատրաստել գյուղից զուրս լիկած շոփֆեր տրակտորիստների կազր: Անհրաժեշտ ե, վոր գյուղն իր մեջ ունենա գյուղացի տրակտորիստներ: Այս բացը մասամբ լրացնելու համար Հողագոմատը հիմնել և տրակտորիստ շոփֆերների կուրսեր, վորտեղ գյուղի միջից մեքենայագործությանը քիչ ծանոթ գյուղացիներ սովորում են թերթիապես և գործնականապես այդ արհեստը: Սակայն դա բավարար չե: Անհրաժեշտ ե բացի կուրսերից, այդ նպատակի համար ունենալ հատուկ զպրոցներ:

Անուհետև, իրեւ անհրաժեշտ նախապայման և պահանջ, գալիս և վերանորոգման արհեստանոցների խնդիրը: Անհրաժեշտ գալիս և այդպիսի վերանորոգման արհեստանոցների ցանցով պատել մեր և այդպիսի վերանորոգմանը: Այս կարիքը կա վոչ միայն տրակտուղական իրականությունը: Մաս կարիքը կա վոչ միայն տրակտուղական գործիքների: Մաս ական և շարժական արհեստանոցների կարիքը չափազանց մեծ ե, մեր ունեցած փոքրաթիվ նորոգման արհեստանոցները հնարավորություն չեն տալիս այդ կարիքի մի փոքր մասն անգամ բավարարել: Թե մեր տեղական բյուջեն մի կազմելիս այս կարիքը պիտի լայն մասշտաբով աչքի առները կազմելիս այս կարիքը պիտի լայն մասշտաբով պիտի առնել և թե կոռպերացիան այս մոմենտի վրա հատուկ ուշադրություն պիտի դարձնի: Ինքնըստինքյան հասկանալի չե, վոր այդ թյուն պիտի դարձնի: Ինքնըստինքյան հասկանալի պիտի ունենան անհրաժեշտ բոլոր մեքենաները նորոգման գործը կանոնավոր կատարելու համար:

Գյուղի մեքենայացման գործում խոշոր նշանակություն ունեն մեքենայական ընկերությունները: Այդպիսի ընկերություններ սկսել են կազմակերպվել, կոլեկտիվ կերպով ձեռք բերելու համար խոշոր, թանկարժեք մեքենաներ, սակայն նրանք անհրաժեշտ են և վոչ անհրաժեշտ ու պահանջված կերպով կայուն: Այսուղ ահա հրապարակ պիտի գա Հայոցուղկոսպի կազմակերպ:

չական աշխատանքը՝ բազմացնելու այդպիսի միությունները և ստեղծելու կայուն, ուժեղ, ամուր հիմքերի վրա գրված մեքենայական միությունները, վորոնք մեծ զարկ կտան տեղերի մեքենայացման անհրաժեշտ գործին:

6.

ԱԳՐՈՊՐՈՊԱԳԱՆԴԱՆ

Թուսաստանի բանվորն ու աշխատավոր գյուղացին կոմունիստական կուսակցության գլխավորությամբ և մեր մեծ ուսուցիչ ընկ. Լենինի ղեկավարությամբ կատարելով Հոկտեմբերյան հեղափոխությունը, քաղաքական իշխանությունն իր ձեռքն առավ: Բանվորն ու գյուղացին Խորհրդական իրավակարգ հաստատելով ստեղծեցին սոցիալիստական իրավակարգի նախապայմանները: Այնուհետև ընկ. Լենինի լոգունվը յեղավ սոցիալիստական տնտեսություն հիմնել գյուղատնտեսության և արդյունաբերության մեջ: Յեկայնական բնակչության մեջ կազմակերպում է արդյունաբերության մեջ այսպիս, ինչպես հեղափոխությունը կատարվեց քաղաքական շրջանակներում, նույն հեղափոխությունը կատարվելու յետնահան ֆրոնտում: Ինարկե, այս ֆրոնտն ավելի գըգարին և յերկարատե, քան քաղաքական ֆրոնտը: Այնուհետև մեր կուսակցությունն իր գործունելության հիմքում դրեց սոցիալիստական տնտեսության կազմակերպման գործը՝ քաղաքում և գյուղում, և իր վրա վերցրեց նրա ղեկավարության գործը, իր գիրեկաթվաբերը տալով Խորհրդական ապարատին, ղեպի այդ շինարարության ասպարեզը քաշելով ամբողջ կուսակցությունն իր ապարատով: Մեր կուսակցության համամիութենական համագումարները շարունակ զբաղվել են այդ խնդիրներով և գծել այն ուղիները, վորով պիտի ընթանա մեր տնտեսությունը: Մեր կուսակցության 14-րդ Համագումարն առանձնապես կանգ առավ զյուղի խնդիրների վրա և նշեց այն ուղիները, վորով առաջիկացում պիտի ընթանան մեր աշխատանքները:

Բացի ամենորյա ընդհանուր ղեկավարությունից, վոր մեր կենտրոնական կոմիտեն կատարում է անտեսական ասպարիզում, նրա Ազիտ-բաժինն այս տարվա ընթացքում հսկայական աշխատանք կատարեց ագրուլտուրականդայի գործում: Այստեղ նա շարժման մեջ դրեց վոչ միայն Խորհրդական ապարատը, այլև կուսակցություն տեղական բոլոր աշխատավորներին: Սա մի խոշոր

գործ եր, վոր արդյունավետ հետեւանքներ ունեցավ գյուղացիության մեջ՝ գյուղատնտեսական գիտելիքներ տարածելու գործում։ Ազրոպրոպ աշխատանքը խոշոր հետաքրքրություն առաջ բերեց գյուղացիության մեջ, իսկ ցուցահանդեսները, փորոնք կազմակերպվեցին համարյա բոլոր գավառներում, կրթիչ նշանակություն ունեցան։ Գյուղացիների մեջ առանձին հետաքրքրություն զարթեցրեց որինակելի տնտեսությունների տռանձին ձևուղերի բարեկաման նպատակով նշանակված մրցանակաբաշխությունը։

